

Կարակուրտ՝ թարգմանաբար նշանակում է «սև մահ»: Այդպես են անվանում նրան Միջին Ասիայում: Այդ թունավոր սարգն ուրիշ անուններ էլ ունի՝ Ղրիմում, Կովկասում, Ուկրաինայում այն հայտնի է «սև դայլ» անվան տակ: Ի վերջո և՛ մեր երկրում, և՛ Հյուսիսային Ամերիկայում նրան երբեմն անվանում են «սև ալիք»: Դրա պատճառն այն է, որ «կինը»՝ էգը կարճատև ամուսնական կյանքից հետո ուտում է իր «ամուսնուն»՝ արուին, մնալով «ալիք»: Մնացած անունները հետևանք են այն բանի, որ նա թունավոր է: Մեկ հարյուրհազարերորդական գրամի շափով թուլնի կաթիլը, որ խայթելիս սարդը թողնում է կենդանու կամ մարդու մարմնի մեջ, ընդունակ է թունավորելու ուղտին և ծանր ու անտանելի ցավեր առաջացնելու մարդու ամբողջ օրգանիզմում:

Ոչ լրիվ տվյալների համաձայն, միայն 1895 թվականին կիրգիզական և կալմիկական տափաստաններում գրանցվել է այդ սարդերի կողմից մարդկանց խայթելու մոտ հազար դեպք, որից ավելի քան հարյուր մահացու: 1896 թվականին Ղազախստանում կարակուրտի խայթած 738 ուղտից 276-ը սատկել է:

Ներկայումս էլ կարակուրտի տարածման շրջաններում նրա խայթոցը հազվագեպ երևույթ չէ՝ երբեմն նրա խայթոցից սատկում են անասունները, իսկ հիվանդանոցները լցվում թունավորվածներով:

Կարակուրտը բավական մեծ տարածում ունի: Այն հանդիպում է ամբողջ Միջին Ասիայում: Սովետական Միության նվերոպական մասում կարակուրտը սովորաբար հանդիպում է հարավային տափաստաններում, Ղրիմում, Կովկասում: Նրա ազդակիցներն ապրում են Հարավային Ամերիկայում, Ավստրալիայում, Աֆրիկայում, Նոր-Զելանդիայում, Մադագասկարում: Ամենուր նրան շատ լավ գիտեն և սարսափում են:

Հնարավոր է արդյոք կանխել թունավորումը՝ կարակուրտի խայթոցի դեպքում: Պարզվում է, որ հնարավոր է: Եվ շատ հասարակ ձևով: Սարդի թուլնը տաքացնելիս արագ բայթում է: Բոցավառվող լուցկու գլխիկով այրելով խայթած տեղը, կարելի է խուսափել հիվանդանալուց: Բայց նման պարզ եղանակը օգնում է միայն այն դեպքում, երբ դա արվում է ոչ ուշ, քան խայթոցից երկու րոպե անց:

ԿԵՆԴԱՆՆԵՐԸ ՏԱՐԲԵՐՈՒՄ ԵՆ ԱՐԴՅՈՔ ԳՈՒՅՆԵՐԸ

Այս պորբլեմով հետաքրքրվել է գերմանացի կենդանաբան Դուեկկերը: Վերջերս նա հրապարակեց իր դիտումների արդյունքները: Հետազոտությունները կատարվել են հետևյալ կերպ:



Սնունդը տեղավորել են տարբեր գույնի ամանների մեջ, որոնք հնարավոր էր հեշտությամբ բացել: Կենդանուն սովորեցրել են ուտել որևէ գույնի նույն ամանից: Հետո այդ ամանը տեղավորել են նույն ձևի, բայց այլ

գույնների մյուս ամանների կողքին: Դրանցից և ոչ մեկը բացվող չի եղել, բայց ամեն մեկում եղել է միևնույն սնունդը:

Իր փորձերի հիման վրա Դուեկկերը պնդում է, որ շներն ու կատուները զրեթե չեն տարբերում գույները: Դրանց նկատմամբ միանգամայն անզգա են առնետները, մկները և ճագարները:

Ձիերը, ոչխարները, խոզերը, քարայծերը, սկյուռները և կղաքիսները գույները տարբերում են սպեկտրի առանձին մասերում միայն: Կենդանիների որոշ տեսակներ տարբերում են միայն երկու գույն՝ կանաչը և կարմիրը: Եղջերուները դանադանում են մոխրագույնը մյուսներից: Ընձուղտները տեսնում են գեղինը, կանաչը և նարնջագույնը:

Կապիկների մեծ մասը տարբերում է շատ գույներ: Գուլնեի նկատմամբ առանձնապես հարուստ զգայնությամբ է օժտված շիմպանզեն, որն այդ տեսակետից զրեթե չի զիջում մարդուն: